ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԱՅՍՕՐ ՀՈՒՆԻՍՄԵԿՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ

01.06.2022 18:26

Հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, Փաստաբանների պալատի վարչական շենքի երկրորդ հարկը, ինչպես նախորդ տարիներին այնպես էլ այսօր, վերածվել էր մեծ խաղահրապարակի:

Փաստաբանների պալատը հյուրընկալել էր փաստաբանների երեխաներին:

Երեխաների օրը տոն դարձնելու համար՝ կազմակերպվել էին հետաքրքիր խաղերով և անակնկալներով լի միջոցառումներ:

Ամփոփվել է նաև նախապես հայտարարված «Ազատություն» խորագրով նկարչական մրցույթի արդյունքները, և մասնակից երեխաները Փաստաբանների պալատի կողմից պարգևատրվել են հավաստագրերով և նվերներով:

Մրցանակաբաշխությունը կատարվել է 4 անվանակարգերով՝ « Լավագույն թեմատիկ բացահայտում», «Ստեղծագործ միտք», «Լավագույն գունային լուծում» և «Ամենափոքրիկ նկարիչ»:

Ազատության մասին երեխաների մտահորիզոնը շատ հեռուն էր թևածել, և մրցույթին ներկայացված նկարները մեկը մյուսից հետաքրքիր էին: Փոքրիկ նկարիչների ստեղծագործությունները ցուցասրահում ներկայացված էին բոլորի ուշադրությանը:

Ի՞նչ է պետք երեխաներին երջանիկ լինելու համար՝ երգ, պար, խաղեր, վառ գույներ և անկեղծ ժպիտներ: Փաստաբանների պալատն այսօր արել էր ամեն հնարավոր բան, որպեսզի երեխաների համար ապահովվեր այս մթնոլորտը: Մաղթում ենք, որ բոլոր փոքրիկների ամեն օրը լինի գունավոր և խինդով լեցուն:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })